ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/149

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 25.10.2018թ. թիվ 01.1/26-3/19329-18 գրությամբ «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 04.10.2018թ. թիվ Ե/40/1362-18 գրության հիման վրա, 25.10.2018թ. «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 04.10.2018թ. թիվ Ε/40/1362-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից շրջանառու պոմպային ագրեգատների նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-31/18 ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել՝ «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի 18.06.2018թ. թիվ 2 որոշմամբ «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և նրան առաջարկվել է ներկայացնել հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

Ներկայացված՝ որակավորումն հիմնավորող փաստաթղթերում առկա են եղել հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ.

1) Հրավերի 1-ին մասի 2-րդ գլխի 2.5 կետի 1-ին ենթակետով սահմանված է. «մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայ-տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:» «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ն «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման համար ներկայացրել է երկու պայմանագիր, որոնց շրջանակներում կատարված աշխատանքների հանրագումարային ծավալը՝ գորմարային արտահայտությամբ, պակաս է տվյալ ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

2) Թիվ ՄԱ 36/17 պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված 18.07.2017թ.-ից 21.07.2017թ., իսկ պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրության և հաշիվ

ապրանքագրի ամսաթիվ է հանդիսանում 24.07.2017թ., հետևաբար տվյալ պայմանագիրը չի կարող համարվել պատշաճ կատարված:

3) Չի ներկայացվել պայմանագրի Հավելված 1-ը:

4) Հավելված 5.1-ում նշված չեն տեխնիկական միջոցների քանակները;

5) Չեն ներկայացվել հրավերի 1-ին մասի 2-րդ գլխի 2.5 կետի 2-րդ ենթակետով սահմանված տեխնիկական միջոցների տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

6) Հրավերի 1-ին մասի 2-րդ գլխի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, որը «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետով՝ հանձնաժողովը նիստը կասեցրել է և առաջարկել է «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ին շտկել առկա անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ի կողմից որակավորումն հիմնավորող փաստաթղթերի շտկում չի կատարվել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:»:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՓԲԸ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 26.10.2018թ. գրությամբ դիմել է «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.10.2018թ. թիվ 01.1/26-3/19329-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Հակոբյանը և Վարդան Վարդանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/149 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 25.10.2018թ. թիվ 01.1/26-3/19329-18 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 04.10.2018թ. թիվ Ե/40/1362-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-31/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-31/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 26.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3, 04.05.2018թ. նիստի թիվ 4 և 28.06.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3.1 արձանագրությունները, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար՝ շրջանառու պոմպային ագրեգատների նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-31/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-31/18 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների

պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 26.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝

- 6-րդ կետով որոշել է ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ին:

- 7-րդ կետով որոշել է «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ի կողմից որակավորումն հիմնավորող փաստաթղթերը գնահատել է անբավարար: Ներկայացված որակավորումն հիմնավորող փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես.

1) Հրավերի 1-ին մասի 2-րդ գլխի 2.5 կետի 1-ին ենթակետով սահմանված է. «մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի տվյալ ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:» «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ն «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման համար ներկայացրել է երկու պայմանագիր, որոնց շրջանակներում կատարված աշխատանքների հանրագումարային ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

2) Թիվ ՄԱ 36/17 պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված 18.07.2017թ.-ից 21.07.2017թ., իսկ պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրության և հաշիվ

ապրանքագրի ամսաթիվ է հանդիսանում 24.07.2017թ., հետևաբար տվյալ պայմանագիրը չի կարող համարվել պատշաճ կատարված:

3) Չի ներկայացվել պայմանագրի Հավելված 1-ը:

4) Հավելված 5.1-ում նշված չեն տեխնիկական միջոցների քանակները;

5)Չեն ներկայացվել հրավերի 1-ին մասի 2-րդ գլխի 2.5 կետի 2-րդ ենթակետով սահմանված տեխնիկական միջոցների տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

6) Որոշ աշխատակիցների անձնագրերի պատճեններ չեն ներկայացվել:

7) Աշխատանքային փորձի ժամանակահատվածում քանակը գրված չէ:

8) Հրավերի 1-ին մասի 2-րդ գլխի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, որը «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել:

9) Չի ներկայացվել ավագ վարպետի և վարպետի միջին մասնագիտական կրթության առկայությունն հավաստող փաստաթուղթ:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետով՝ որոշել է նիստը կասեցնել և «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ին առաջարկել շտկել առկա անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը 28.06.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3.1 արձանագրությամբ արձանագրել է, որ «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 48-րդ կետի 2-րդ ենթակետը որոշել է «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչները ընդունեցին այն փաստը, որ իրենց կողմից

սահմանված կարգով և ժամկետում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ համապատասխան շտկումներ չեն իրականացվել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

• 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

• 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին.

• 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը.

• 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար՝ շրջանառու պոմպային ագրեգատների նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-31/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում

հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

• 7.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները:

• 7.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով.
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են.
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).
- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Հանձնաժողովը 26.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետով արձանագրել է, որ «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

- Հանձնաժողովը 28.06.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3.1 արձանագրությամբ որոշել է «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ին առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները, սակայն արձանագրված անհամապատասխանությունները վերջինիս կողմից չեն շտկվել:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ն՝ Հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող շտկված փաստաթղթերը չներկայացնելով՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջներն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելով, գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.10.2018թ. թիվ 01.1/26-3/19329-18 գրությամբ «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:
2. «Ռ ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ